

ՎԱՐԴԻՄԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ Մ.Զոքանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի տնօրեն, տ.գ.դ., պրոֆեսոր*

ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ Մ.Զոքանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտաշխատող, տ.գ.թ.*

ՀԱՄԱՀԽԱՐՀԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄ.

ՊԱՏՃԱՌՆԵՐ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ

Ժամանակակից համաշխարհային ֆինանսական ճգնաժամը ճգնաժամերի շղթայի մի օղակն է: Բավական է նշել, որ միայն 1990-ական թվականներին համաշխարհային տնտեսությունում սկսված ճգնաժամերը ընդգրկել են երկրների որոշ խումբ: Այսպես, օրինակ, 1992-1993թթ. վալյուտային ճգնաժամի փորձությանն են ենթարկվել Եվրամիության մի խումբ երկրներ (Մեծ Բրիտանիա, Իտալիա, Շվեդիա, Նորվեգիա և Ֆինլանդիա), 1994-1995թթ. Մեքսիկայում սկսված ճգնաժամը տարածվեց Լատինական Ամերիկայի մի շարք երկրների վրա, իսկ 1997-1998թթ. ֆինանսական ճգնաժամն սկսվեց Հարավարևելյան Ասիայում (Կորեա, Մալազիա, Թաիլանդ, Ինդոնեզիա, Ֆիլիպիններ), որը հետո տեղափոխվեց Արևելյան Եվրոպա (Ռ-Դ և նախկին ԽՍՀՄ-ի տարածքի այլ երկրներ) ու Լատինական Ամերիկա (Բրազիլիա) և այլն: Այլ կերպ ասած, ֆինանսական ճգնաժամերը համաշխարհային տնտեսության մեջ մոր երևույթ չեն: Սակայն ներկայիս ֆինանսական ճգնաժամն աչքի է ընկնում ինչպես իր խորությամբ, այնպես էլ ընդգրկման աշխարհագրությամբ, քանի որ այն իր «որոգայթների» մեջ է քաշել համաշխարհային ամբողջ տնտեսությունը, ինչպես կատարվեց 1929-1933թթ. Մեծ ճգնաժամի ժամանակ: Դեռ ավելին, ներկայիս ճգնաժամն իր բացասական ներուժով ավելի աղետաբեր ու վտանգավոր կարող է լինել, քան Մեծ ճգնաժամն էր այն պարզ պատճառով, որ.

- այն սկիզբ է առել համաշխարհային ՀՆԱ-ի 1/3-ից ավելին ձևավորող ԱՄՆ-ում, որի տնտեսությունը, բնականաբար, առավել շատ է ինտեգրված այլ երկրների տնտեսությունների:
- Ներկայիս համաշխարհային տնտեսությունն առավել գլոբալացված է:

Հետևաբար ներկայիս ճգնաժամը ճիշտ կլինեք անվանել Մեծագույն ճգնաժամ, որն սկիզբ առավ ԱՄՆ-ի հիփոթեքային վարկավորման շուկայում: Պատճառն այն էր, որ բանկերը հիփոթեքային վարկեր էին տրամադրում նույնիսկ այնպիսի անձանց, որոնք հետագայում չէին կարողանալու վերադարձնել այդ գումարները: Այդ պատճառով առաջացավ «NINJA» տերմինը, որը նշանակում էր ոչ եկամուտ, ոչ աշխատանք, ոչ ակտիվներ: Այսինքն՝ բանկերը, հաշվի չառնելով այդ գործոնների առկայությունը, վարկեր էին տրամադրում ֆինանսապես ոչ ապահովված անձանց, որն էլ հետագայում ֆինանսական ճգնաժամի պատճառ դարձավ: Միևնույն ժամանակ 2005 թվականից ԱՄՆ-ում անշարժ գույքի շուկայում տեղի ունեցավ անշարժ գույքի արժեքի նվազում: Ստացվեց այնպես, որ վարկի գումարը գերազանցեց անշարժ գույքի արժեքին, և մարդիկ ավելի նպատակահարմար էին գտնում հրաժարվել այդ վարկերը բանկերին վերադարձնելուց՝ փոխարենը բանկերին ուղարկելով իրենց տան բանալիները:

Նման իրավիճակի ի հայտ գալը պայմանավորված է այն հանգամանքով, որ պետական կարգավորումը բացակայում էր, որը այս պայմաններում արդարացված համարել չի կարելի, այսինքն՝ անուշադրության էր մատնվել ֆինանսական ամբողջ համակարգը: Եվ պատահական չէ, որ Ռ-Դ ֆինանսների նախարար Ա.Կուդրինը ամերիկյան ծագում ունեցող ֆինանսական ճգնաժամի պատճառների (մակրոտնտեսական, միկրոտնտեսական և ինստիտուցիոնալ) շարքում

առանձնապես կարևորել է ամերիկյան տնտեսությունում իրացվելիության ավելցուկի խնդիրը¹, որի ներգործության արդյունքում ակտիվացել է շուկայական «պոպուլարների» կամ, այլ կերպ ասած, ակտիվների գների բարձրացման ձևավորման գործընթացը: Ի դեպ, ակտիվների գնահատման աղավաղումը բնորոշ է ոչ միայն ԱՄՆ-ին, այլև համաշխարհային տնտեսությանն ընդհանրապես: Եվ սխալված չենք լինի, եթե նշենք, որ համաշխարհային տնտեսությունում համաշխարհային մասշտաբով տեղի է ունենում ՀՆԱ-ի հավելագրում (приписки): Ակտիվների գնահատման աղավաղմանը, հետևաբար նաև ճգնաժամի հասունացմանը նպաստեց նաև ֆինանսական նոր գործիքների՝ կառուցվածքային բաժնետոմսերի զարգացումը, որը հանգեցրեց ոչ թե ակտիվների իրական գնահատմանը, այլ գնահատման ռիսկերի «դիմակավորմանը»:

Ստեղծված իրավիճակը և դրանից դուրս գալու ելքերի «փնտրտուքը» պարտադրում են հիշել դասական տնտեսագիտության ներկայացուցիչների այն գիտական հիմնավորում ունեցող մոտեցումը, որ գինը ապրանքի արժեքի (ապրանքի արտադրության հասարակայնորեն անհրաժեշտ միջին աշխատանքային ծախսումների) դրամական արտահայտությունն է: Մյուս կողմից, հայտնի է նաև այն, որ գիտատեխնիկական առաջընթացին զուգընթաց ապրանքի արտադրության վրա կատարվող ծախսերը հարաբերականորեն կրճատվում են, և իսկապես դա այդպես է: Այս երկու աբսոլյուտիկ ճշմարտությունների պարագայում շատ ապրանքների (նավթ, գազ և այլն) գները պետք է իջնեն: Մինչդեռ տարիներ շարունակ տեղի է ունեցել գների աննախադեպ աճ: Ընդ որում, այդ աճը այնքան թռիչքային է եղել, որքան վերջին մի քանի ամիսների գնանկումը (մասնավորապես նավթի գծով), որը նույնիսկ շուկայի առաջարկ-պահանջարկի, այսպես կոչված, ոսկե կանոնով չի կարող բացատրվել: Դրա պատճառը, մեր կարծիքով, այն է, որ շուկայական տնտեսության պայմաններում հրաժարվեցին ապրանքի գնի որոշման դասական տնտեսագիտության մոտեցումներից և հիմք ընդունեցին, այսպես կոչված, առաջարկի ու, այսպես կոչված, պահանջարկի համապատասխանությունը՝ մոռանալով կամ միտումնավոր մոռացության տալով, որ ֆինանսական միջնորդները (մասնավորապես բրոքերները, որոնք պատկերացում անգամ չունեն այս կամ այն ապրանքի արտադրության պրոցեսի մասին) կարող են իրենց տաքուկ աշխատատեղերում ձևավորել արհեստական առաջարկ կամ արհեստական պահանջարկ և կամ երկուսը միաժամանակ: Առավել պատկերավոր լինելու համար նշենք, որ սխալված չենք լինի, եթե բրոքերների ժամանակակից գործելաոճը համեմատենք ազարտային խաղերի սիրահարների գործելաոճի հետ, որի արդյունքում շահում են կամ տուժում: Ուստի կարող ենք փաստել, որ առաջարկի ու պահանջարկի, այսպես կոչված, ոսկե կանոնը և շուկայական տնտեսության առանձին պոստուլատներ սնանկ դուրս եկան, իսկ տնտեսության պետական կարգավորման Քեյնսյան մոտեցումները վերանայման կարիք ունեն: Հակառակ դեպքում, մեր կարծիքով, հնարավոր չէ շուկայական տնտեսությունն ու զարգացած կապիտալիզմը փրկել համատարած փլուզումից:

ԱՄՆ-ում ծնունդ առած ֆինանսական ճգնաժամը համաճարակի նման իր բացասական ներգործությունն է ունենում բոլոր պետությունների գործառույթների և տնտեսության տարբեր ճյուղերի վրա: Դեռ ավելին, «ֆինանսական ճգնաժամ» բառակապակցությունը բացասական ասոցիացիաներ է առաջացնում մարդկանց մտածելակերպում՝ անկախ այն բանից, թե այդ մարդը որ երկրի քաղաքացի է, ինչ մասնագիտություն ունի, որ սեռից կամ ռասայից է կամ ինչ դավանանք ունի: Այլ կերպ ասած, ներկայիս ֆինանսական ճգնաժամի հաղթահարումը լույս մասնագիտական կամ միայն տնտեսագիտության խնդիր չի կարող լինել: Տնտեսագիտությունը ներկայիս ֆինանսական ճգնաժամի հաղթահարման առանցքը կարող է լինել, որի շուրջ կարող են «պտտվել» և իրենց դրական ներգործությունն ունենալ նաև այլ մասնագիտությունները (հոգեբանություն, փիլիսոփայություն և այլն)՝ իրենց կողմից առաջարկվող «յուրահատուկ ղեկավարումներով», քանի որ այս ճգնաժամի բացասական դրսևորումները բազմաթիվ են, բազմաբնույթ և բազմաոլորտ, որոնց ընդգրկման աշխարհագրությունն անընդհատ ընդլայնվում է:

¹ А.Кудрин. "Мировой финансовый кризис и его влияние на Россию", Вопросы экономики, №1, 2009, стр. 9.

Բանը հասել է նրան, որ տաս տարուց ավելի միլիարդատերերի ցուցակը գլխավորող Բիլ Գեյթսը դեռևս 2008թ. դեկտեմբերին հայտարարել է, որ 2009թ. բարեգործական օգնությունների ծավալը կրճատելու է 10%-ով, իսկ բարեգործական ֆոնդի ամձնակազմին կոչ է արել կրճատել սեփական պահպանության ծախսերը: Առանձին երկրներ, ինչպես, օրինակ, Իսլանդիան՝ հանձին երկրի վարչապետի, ֆինանսական ճգնաժամի մեղմացման միջոցառումների շարքին է դասում սեփական դրամական միավորից հրաժարվելու և դուլարը կամ եվրոն իրենց երկրի դրամական միավոր դարձնելու հնարավորությունը: 2008թ. դեկտեմբերին Չինաստանի նման երկրի դրամական միավորի (յուանի) կուրսը ամերիկյան դոլարի համեմատությամբ վերջին երեք տարիներին առաջին անգամ իջավ 0,73%-ով: Հետաքրքրական է նաև այն փաստը, որ Հիլարի Զվինտոնը մինչև ԱՄՆ-ի պետքարտուղարի պաշտոնը զբաղեցնելը հայտարարել էր, որ ԱՄՆ-ը չի կարող միայնակ լուծել իր պրոբլեմները և միայնակ դուրս գալ ֆինանսական ճգնաժամից: Համատարած են մավթի համաշխարհային գնի անկումները (շուրջ 40 դոլար), որն իր ազդեցությունն է ունեցել նաև մյուս ապրանքների գնանկման վրա: Ապրանքների ու մատուցվող ծառայությունների գնանկման պայմաններում կրճատվում են մավթի արդյունահանման, ապրանքների արտադրության, մատուցվող ծառայությունների և այլնի ծավալները: Այդ ամենն, իրենց հերթին հանգեցնում են աշխատատեղերի կրճատման ու գործազրկության աննախադեպ աճի՝ իր բացասական բոլոր դրսևորումներով հանդերձ:

ԴԱՎԻԹ ՉԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*ՀՀ ԳԱՍ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտաշխատող, տ.գ.թ.*

ԳԼՈՐԱԼԻԶԱՑԻԱՆ ԵՎ ՆՐԱ ՓՈԽԵՐԸ

Գլոբալիզացիան կարևոր տնտեսական երևույթ է, որի դերն ու նշանակությունը տարեց-տարի մեծանում է: Ներկայումս յուրաքանչյուր երկիր ձգտում է առավելագույնս համագործակցել աշխարհի զարգացող ու զարգացած երկրների հետ և արդյունքում գտնել իր տեղը համաշխարհային շուկայում՝ տրամադրելով իր ապրանքները և ծառայությունները: Այս գործընթացը հատկապես կարևորվում է զարգացող երկրների համար, (այդ թվում նաև մախկին խորհրդային (ներկայումս՝ ԱՊՀ) պետությունների համար), որոնք շուկայական համակարգին ինտեգրվել են ընդամենը մի քանի տասնամյակ առաջ, ու որոնց կայացման գործում դա կարող է վճռորոշ ազդեցություն ունենալ: Գլոբալիզացիայի դերը էլ ավելի լավ հասկանալու և գիտակցելու համար կարևոր է հասկանալ դրա տնտեսական, սոցիալական, ինչպես նաև քաղաքական նշանակությունը:

Հարկ է նշել, որ գլոբալիզացիա տերմինն ունի բազմակի նշանակություն և կիրառվում է տարբեր ենթատեքստերով: Մակայն այս դեպքում մենք գլոբալիզացիա տերմինը կընդունենք որպես տնտեսական գլոբալիզացիա, որի մեջ մտնում են ապրանքների, ծառայությունների, կապիտալի շարժը մի պետությունից դեպի մյուսը: Արդյունքում տեղի են ունենում շուկաների փոխադարձ համագործակցություն և երբեմն էլ նույնիսկ միավորում:

Գլոբալիզացիան անցել է պատմական մի քանի փուլեր.

Առաջին փուլը ներառել է 1870-1914 թվականները, երբ միջազգային առևտուրը տարեկան աճեց 4%-ով, իսկ կապիտալի միջազգային շարժը՝ 4.8%-ով: Գլոբալիզացիայի առաջին փուլին հաջորդեց անսպասելի հաջողությունը: Արդյունքում տնտեսական աճը բարելավվեց, և 1870-1914թթ. համաշխարհային ՀՆԱ-ի աճը մեկ անձի հաշվով կազմեց 1,3%, այնինչ 1820-1870 թթ. այդ նույն ցուցանիշը 0,53% էր: Հասկանալի է, որ գլոբալիզացիայի արդյունքներից օգտվեցին